

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽԻՉ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՑԻ,

(Շարունակութիւն և վերջ ¹⁾)

Իդէական աչքով տեսնել կարողացող մէջ
մի հրաշալի սէր կը բռնկէր դէպի նա:

ՊԼԱՏՈՆ:

Դաստիարակներ, ձեր սաները մտքի շըր-
ջանէ վերայ ազդելու զօրութիւն ձեռք
բերէք և այն ժամանակ դուք կ'ունենաք
ազդեցութիւն և՛ նորա արտադրութեան՝
կամքի վերայ:

ՖԵՐՈՒԻՍ:

2. ԲՆԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ:

Հայրենադիտութիւնը տարրական բուսաբանութեան, կենդանաբանու-
թեան, հանքաբանութեան, բնադիտութեան և աստղաբաշխութեան հետ
մանկան ուսուցանում են, թէ ինչպէս դրանք բոլորը մեզ բնակարան,
կերակուր և հագուստ են տալիս, թէ ինչպէս նրանց կեանքն էլ արեգակի լու-
սից, ջերմութիւնից, ջրից և օդի կախում ունի: Ինչ վերաբերում է վեր-
ջիններին զօրութեան ալս կամ ալն կերպ դործադրւելուն՝ նրանց ալս ան-
հասանելի է, ինչպէս իրանց կեանքի ամենաառաջին տարիներում ծնողնե-
րի իմաստութիւնը անարարութեան մէջ, որոնցից բարձր էակ չէին կարո-

¹⁾ Տե՛ս «Մուրճ»-ի Զ-րդ համարը:

դացել երեակալել: Ահա ալստեղ մանկան մէջ բուն են դնում կրօնական զգացմունքների արն նախազգացական մտապատկերները, որոնք ապագային կրօնական համոզմունքի աստիճանին են հասնելու:

Եթէ բնական գիտելիքների դասաւանդութիւնը կանոնաւոր է, ալն ժամանակ ուսուցիչն աշխատում է այս գիտելիքներից ստացած վերոյիշեալ մտապատկերների համախմբութիւնները և գաղափարները հիւսել բարոյագիտական առարկաներից ստացածների հետ: Առհասարակ մենք ընդմիջտ պէտք է մեր աչքի առաջ ունենանք կենդրոնացման երրորդ գլխաւոր սկզբունքը, որ ապացուցանում է կրթական ուսումնարանի բոլոր գիտելիքներին կենդրոնացուցման կարևորութիւնը կրօնական-բարոյական շուրջը: Իսկ եթէ մարդու մտաւոր կեանքի զանազան շրջանները սերտ լարաբերութիւն ունին միմեանց հետ, ալն ժամանակ, երբ նորա գիտակցութեան մէջ մի միտք է բարձրանում, մի ակընթարթում վերաբառաւորում է իրան հաղորդակից կախարանները (նման հեռազրականին) և որոնք համախմբուելով գիտակցութեան շուրջը՝ խորհուրդ են կազմում՝ լարուցած խնդրին, ցանկութեանը և ալն նպատակաւարմար վճիռ տալու համար: Զորօրինակ՝ եթէ կրօնագիտութիւնը իւր տեսակէտից է խօսում Աստուծոյ նախախնամութեան մասին՝ բնական գիտութիւնները նորան օգնութեան են հասնում իրանց գիտական և համոզեցուցիչ փաստերով:

3. ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԱՋԴԵՑՈՒԹԻՒՆԸ:

Բնութեան երևութների հրաշալի կարգ ու կանոնաւորութիւնը հասկանալու և նրանցով հիմնալու համար՝ կարևոր է մաթեմատիկայի (մանկական հասակում՝ թւաբանութեան) վերին աստիճանի ճիշդ քննական ոգին: Հերբարտը մի անգամ իւր սանի մասին վերջինիս հօրը տեղեկութիւն գրելիս՝ այսպէս է խօսում մաթեմատիկայի բարոյական ուժի մասին. «Բաց նա (աշակերտ Լուդվիգը, որին ընտանեկան դաստիարակութիւն էր տալիս) պէտք է կարիք զգալ նաև մարդկային լարաբերութիւնների կապակից և լիակատար նկարագրութեան: Եթէ մեր յոյսը հիմնուած է նորա հասկացողութեան վերաջ, ալն ժամանակ բարոյականութեան պատէշները պէտք է նորան հարկադրեն (զործելու) իրանց հաւաստիութեամբ: Բարոյական պատէշները պէտք է նորան սիրելի լինին իրանց պարզութեամբ և Լուդվիգի նրանց մասին ունեցած լիակատար համոզմունքով (Einsicht): Առաքինութիւնը պէտք է ընդունելի լինի իւր կանոնաւորութեամբ. անարդարութիւնը պէտք է նորան ատելի լինի իբրև անմտութիւն (Ungereimtheit): Այդ կողմն է տանում և մաթեմատիկայի ուսումնարանի միջից անցնող ճանապարհը: Ալն ժամանակ նա կը զգալ, որ նա ինքը, իւր սեպհական համոզմունքն է, որ գործնական բարոյականութեան (Moralität) ուսուցում:

ն երես օրէնքի է վերափոխում. միայն անպէս նա կարող է բարուպէս բարի լինել, եթէ ոչ՝ մի ուրիշը կը լինէր, որ նորա միջոցով, ինչպէս մեքենայի՝ կը գործէր»:

Կանաւը նույնպէս ալն կարծիքին է, որ մաթեմատիկական մեծութիւնների անհամար չարաքերութիւնների միջի խիստ կարգն ու հարմոնիան մարդուս բնական հրաշալիքներից պակաս չէ հիացնում ¹⁾:

Առ ալժմա ալքանովս բաւականանալով մաթեմատիկայի մասին, տեսնեք, թէ թւաբանութիւնն ինչպէս է ներգործում մանկան վերաւ առաջին տարիներում:

Մանուկները ծանօթանալով բնական երևոյթներին՝ նրանց հիացումն աւելի և աւելի կը լինի, երբ նրանք նոյն իսկ սկզբնական թւաբանութեան միջոցով հետզհետէ գիտակից կը լինին իրանց սիրելի բոյսերի, կենդանիների և հանքերի մասերի և չափութիւնների զարմանալի զուգաչափութեանը և կանոնաւորութեանը: Նրանց մէջ անշուշտ կը ծագի մի նախադրացում ալն լսակի մասին, որ անմանալի իմաստութեամբ տնօրինել է ալք երևոյթները: Եւ նոյն իսկ թւաբանական չորս գործողութիւնների անպակման ճշգրտութիւնը, առաջարկած խնդրի ճիշդ լուծման հասնելու անշուշտ ճշմարտութիւնը, անուկներին հիշեց վաղ ժամանակներից կ'ուսուցանէ մտքերի կենդրոնացում և կը սովորեցնէ սկսած աշխատութիւնն իսկութեամբ գլուխ հանել: Թէ որքան զօրաւոր ուժ է մաթեմատիկան կամք և բնաւորութիւն զարգացնելու կրթական ամենածանրակշիռ գործում, արժէ միայն լինել, որ նա բոլոր գիտելիքներից ամենաշատ լարւած ուժն է պահանջում: Միայն թէ մաթեմատիկայի դասաւանդութեան մեթոդն ուղիղ լինէր, ալն ժամանակ մտքի այս վերին աստիճանի լարումը ոչ թէ ծանրութիւն, այլ հրճւած կը պատճառէր աշակերտին, ինչպէս որ մենք՝ ուսուցիչներս շատ անգամ՝ իբրև աշակերտ և ապա՝ դասատու, փորձել ենք:

Առաջին շրջանում դեր խաղացող առարկաներից մնացին լեզուն, երգը և նկարչութիւնը գրութեան հետ: Որովհետև այս առարկաները դեռ

1) Իմ մանկական մտածմունքներն այս խնդրի մասին, որոնց կարծեմ, ինչպէս շատերը կարող էին կենթադրել, թերևս Հետաքրքրութիւնից զուրկ չը լինէին: Երբ ես ուսայ թւաբանական ամենափոքր քանակութիւնների տարրական 4 գործողութիւնները, ինչանում այսպիսի հարց ծագեց. եթէ տէրտէրն ասում է, թէ Աստուած ամենաէաւրոյ է, մի՞թէ այդ Ամենաէաւրոյը չի էաւրոյ աշխպէս անել, որ 2X2 չորս չը լինի, 10:2 անպատճառ 5 չը լինի և այլն: Զը դեռեմ այս հասակի վերջերումն էր թէ պատանեկական սկզբներում, որ ես սկսեցի դալ այն Համոզմունքին, որ իմաստուն Աստուածը այդպէս անմիտ բան չի էաւրոյ կամ եւր: Եւ քանի աւելի ընդարձակեց բնական երևոյթներին յարակից իմ մաթեմատիկական մտաւոր շրջանը, այնքան ես աւելացաւ իմ Հիացումը:

ևս անկարող են այս շրջանում իրանց ուժերը ամբողջ բազմակողմանիութեամբ գործելու, ուստի այստեղ մենք նրանցով պարապելու ենք ղեկահարկանքի կերպով:

4. ԼԵՋՈՒԻ ԵՒ ԳԵՂԱՐԻԵՍՏՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ

ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ:

Լեզուն, իբրև արտապատիչ զանազան գիտելիքների՝ զտում, մարդում է մանկան ներքին աշխարհը: Մտքեր ու զգացմունքներ, երբ նրանք ընտիր ու պարզ արտապատիւթիւնից զուրկ են, այն ժամանակ նրանք ինչպէս որ լսողի և ընթերցողի վերաջ խոր տպաւորութիւն չեն գործում, նոյնպէս էլ նրանց արտապատիւթիւն ներքին աշխարհը մի անորոշ, խառն զրութեան մէջ են թողնում: Մտքեր ու զգացմունքներ, կարծես, միայն այն ժամանակ են կեանք աւնում, երբ նրանք արտապատիւթեան են: Պարզ է, որ միայն կենսալի մտքերն ու զգացմունքները կարող են մարդու կեանքին ուղեցոյց լինել:

Լեզուն իւր ընտիր ընթերցարանի միջոցով, որ կաղմեւելու է համաձայն կենդրոնացուման սկզբունքին՝ հարստացնում ու կատարելագործում է միւս գիտելիքներից ստացած մտաւոր շրջանները: Սկզբնական ընթերցանութիւնը, որ պահանջում է մտապատկերների որոշ չարապարութիւն և դեռ մեքենականութեան չէ հասած՝ պակաս չի նպաստում կամքի և հետևաբար բնաւորութեան զարգացմանը:

Գրութիւնն ու նկարչութիւնն առաջին տարում հեռու են գեղարւեստից: Մանկան թոյլ ձեռքը դեռ անկարող է գեղագրութեան ու իսկական նկարչութեան: Այնու ամենայնիւ մենք տեսնում ենք, որ մանաւանդ «պատկերահանութիւնը» մանկանը առանձին հրճանք է պատճառում. նորան իւր խզբզած կատուն, կարծես, աւելի մօտ է երևում իրականին, քան ձիթանկար պատկերը: Հէքիաթաբանական կեանքի շրջանն է այս, որ ապրում է աւելի երևակայութեամբ՝ քան իրականութեամբ:

Երգն էլ առաջին տարում աւելի իւր համաչափութեամբ է մանկանը հրճանք պատճառում: Որքան էլ նա պարզ լինի, այնու ամենայնիւ երգող մանկանը ոգևորում ու նորա մտքերը թարմ հոսանքի է ենթարկում:

Երկրորդ և երրորդ տարիներում այս առարկաները հետզհետեւ աւելի գեղարւեստի կերպարանք են ստանում: Բարդական և գեղարւեստական զգացմունքներն իրանց ամենազլխաւոր լատկութեամբ միևնույն աղբիւրից են ծագում, որ է համաչափութիւնը (սիմմետրիա): Բնաւորութեան տէր մարդու ներքին կեանքն իւր արտապատիւթիւններով նման է չափած ու ձևած, գեղարւեստական նախագծով կառուցած մի հիւսնալի շինւածքի, որի իւրաքանչիւր մասը թէ հաւասարակշռութեան և թէ գեղարւեստական:

ամբողջութեան համար իւր սեպհական նշանակութիւնն ունի: Բնաւորութեան տէր մարդու իւրաքանչիւր վարմունք, իւրաքանչիւր գործ իւր որոշ նպատակն ունի: Ինչպէս որ մի գեղարուեստական շինածքի մի մասը տեսնելով՝ միւսի վերաբերմամբ արդէն որոշ դադարիւր կազմել կարող ենք, ալնպէս էլ բնաւորութեան տէր մարդու ալս կամ ալն դէպքում բռնելիք զիրքը մեղ կարող է նախապէս չալտնի լինել:

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ Բ. ՇՐՋԱՆԻ՝ 4—8-Տ. ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՎԵՐԱՅ:

Ուսումնարանական կեանքի ալս շրջանում դեռահաս մարդը, թողնելով լոկ վարելական հակումները՝ թեակոխում է մի աւելի բարձր կեանք, ընտրողութեան (ժողովրդական ուսումնարանի միջին դասարանի) և զիտաւորութեան (բարձր դասարանների) աստիճանը: Մինչդեռ ժողովրդական ուսումնարանն իւր սաներին 15 տարեկան հասակում կրթութեան վերջաւորութեան է մօտեցնում և շտապում է մաքսիմի աստիճանին հասցնել, միջնակարգ ուսումնարանն աւելի դանդաղ և հիմնաւոր ընթացքով է չառաջ մղում իւր աշակերտների իւրաքանչիւր աստիճանի դարգացումը:

1. ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՅԵՂԱՓՈԽԻՉ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ:

Ալս շրջանում սրբազան պատմութեան ուսուցումն արդէն առաջնակարգ տեղ է բռնում: Նորորդ տարւանից սկսած լինելով Հին-Ուխտի պատմութիւնը, չորրորդից՝ դասարանի ուշադրութիւնը և ամբողջ ուսուցումը կենդրոնացնելու է Նոր-Ուխտի պատմութեան շուրջը:

Ի՞նչ է սպասում դաստիարակութիւնն ալս նիւթից: Հարկաւ, ալն չէ՛ նորա սպասելիքն ալս աստուածաշունչ պատմութիւններից, ինչ որ ցարդ, հաղադիւտ բացառութեամբ, մեր ուսումնարաններում «բերան անել տալուց» է առաջանում: Ամենաաջողակ դէպքերում ալդ պատմութիւնները կարող էին (կրք կրօնուսուցին չաջողում էր զգացած սրտով և ճարտար լիդուով պատմել) միալն առժամանակեալ ցնցումներ չառաջացնել, որոնք սակալն, ինչպէս մեր հոգեբանական վերլուծութիւնը ցոլց տւեց, հոգեկան կեանքի անցողական շարժումներ լինելով՝ չէին կարող նորանում մնալ ուն զրութիւններ չառաջացնել: Ալ բան է, եթէ դասաւանդութիւնը կանոնաւոր է: Մանուկն և ապա պատանին ալս շրջանում կանգնած է լինում ընտրողութեան և ապա զիտաւորութեան աստիճանների վերալ: Ահա Քրիտտոսի հարուստ և բեղմնաւոր կեանքն իւր ոգևորիչ վարդապետութիւններով նոր հոսանքի է ենթարկում աշա-

կերտի ներքին կեանքը: Եթէ դասաւանդութիւնը տաղտկացուցիչ է, ալ կատարուում է քրիստոնէական վարդապետութեան առաջին Ուսուցչի ոգով, ալն ժամանակ նաև աշակերտը կը զգայ իրան նոր մտաւոր աշխարհում ալնպէս, ինչպէս Քրիստոսի ունկնդիրները լսելով Նորա խօսքը՝ սթափուում էին խաւարից ու հիանում: Պատանին, որ զեկավարուում է ընտրողութեան և դիտաւորութեան (սուբեկտիւ կամքի առաջին և երկրորդ աստիճաններով) ցուցմունքներով, ալժամ սկսում է ալն հոգեկան գործառնութիւնները ոչ միայն իւր առտնին կեանքի նպատակներին ծառայեցնել (որ է խնօքութեան և նպատակալարմարութեան աստիճանը), ալ և նոր վարդապետութիւնից առաջացած զգացմունքները զանազան ուղղութեամբ մտապատկերների ցանցը հետզհետէ կը կապեն պատանու դիտաւորութիւններն ու ձգտումները նորան ոգևորող բարոյական գաղափարների հետ: Բարոյական գաղափարներն արդէն ուսումնարանական առաջին տարիներից իրանց հիմնական մտապատկերներն ստանալով՝ հետզհետէ, շնորհիւ մի նախագծած կանոնաւոր դասաւանդութեան, ուր հարկ էր լինում, բերեղի (կրիստալի) նման իրանց էին քարշում համանման մտապատկերները, (ինչպէս բերեղը կրիստալիզացիայի ժամանակ՝ համանման մասնիկները): Ինչպէս որ մտապատկերներից դատողութեան միջոցով գաղափարներ էին կազմւում, նոյնպէս էլ գաղափարներից նոյն եղանակով՝ ալժամ մաքսիմիւր: Եւ ալնպէս՝ ժողովրդական ուսումնարանի աշակերտը մօտենում է իւր ուսումնարանական կրթութեան վերջին, իսկ միջնակարգին՝ շտապելու հարկ չը զգալով՝ պատրաստուում է սկզբունքներին աստիճանի համար:

2. ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԱՋԴԵՑՈՒԹԻՒՆԸ:

Կրօնագիտութեան հետ զուգընթացաբար լաւաջ են գնում ընդհանուր և ազգային պատմութիւնը, որոնց նշանակութիւնը կրթական ուսումնարանի համար գլխաւորապէս պէտք է ոչ ալնքան փիլիսոփայական-պատմական, որքան բարոյական կրթական տեղեկացիա ունենալ:

Այս շրջանում պատանին ալ ևս ալնպէս չի գրաւում հէքլաթի և դիւցաղներգութեան մտացածին պատմութիւններով. նա արդէն սկսում է քննական հակացքով նալն իւր մանկական հասակին հաւանելի և գրաւիչ պատմութիւնների վերալ: Ալժամ նորա մէջ բռնւն ձգտում կալ՝ ծանօթանալու և բարեկամանալու իրական կեանքում գործող հերոսների հետ: Պատանին, որ սիրում է արդէն խորասուզիլ և մտապատկերների ամբողջ շարքեր կաղմել, ամբողջ հիւսւածք ապադալ հաւանականութիւնների և դէպքերի, աւելի և աւելի է սկսում պտուել իրան ոգևորող աղնիւ գաղափարների հերոսներին: Իւր ալս սիրելիներին նա ուղեկցում է բոլորով սրաիւ, նրանց մէջ ուղում է մարմնացած տեսնել իւր

իրձևերն ու փափագները՝ նրանց լաղթութիւնն՝ իւր լաղթութիւնն է, նրանց պարտութիւնը՝ իւր պարտութիւնը։ Սե ակալէս ոգևորած բարոյական գաղափարներով ու խրախուսած նրանց իրազործելու լուծերով՝ առանձին գաղափարներից մաքսիմներ են պատրաստուած։

3. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԱՐՈՑԱԿՐԹԻՉ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ։

Բնադիտական առարկաներն ու աշխարհագրութիւնն, եթէ, մանաւանդ առաջին երկու տարիներում, հայրենագիտութեան կերպարանք ունէին, արդ նրանք միմեանցից զատուելով՝ առանձին և ինքնուրոյն համակարգութիւններ են կազմում։

Առաջին տարիներում հայրենագիտութիւնն իւր ակս բազմակողմանի տարրերի միջոցով աստուածալին նախախնամութեան և նորանից կախման մէջ լինելու մտքերը ծնեցրեց մանկան մէջ՝ իսկ հիմա վերջինս խորատուգետով իւրաքանչիւր գիտելիքների մէջ՝ գիտակից է լինում բնական իրերի հրաշալի բաղադրութիւններին, ձևերին ու կեանքին։ Բնական իրերի դասաւանդութիւնը կանոնաւոր կերպով լառաջ ընթանալով՝ պատանուն կ'ուսուցանէ հանքալին, բուսական և կենդանական թագաւորութիւնների փոխադարձ լարաբերութիւններն ու նրանց վերաբերութեամբ նախասահմանաւ տնօրինութիւնները։ Սե ահա վրա է հասնում քիմիալի և ֆիզիկալի վերին աստիճանի հետաքրքրական գործունէութեան ուսուցումը հանքալին, բուսական և կենդանական թագաւորութիւններում։ Մարդու միտքն աւելի ևս բարձրանում է, զբաղւելով հետազոտութեամբ և ականատես ու գիտակից լինելով բնութեան բիւրաւոր հրաշալիքներին։ Սրբ մարդու հոգին զիւրադգաց է լինում բնական երեւոյթների վերաբերութեամբ, սիրում է բնութիւնը ոչ թէ շահագիտական, այլ ճշմարիտ հարցասիրական տեսակէտից, ալն ժամանակ, մենք ինչպէս տեսանք մեր հոգեբանական վերլուծութիւնից, նա ակս տրամադրութեան մէջ այլ ևս չի կարող ընդունակ լինել ստորակարգ հակումների և ձգտումների։ Խօսելով հոգեբանական լեզուով՝ նորա զգալարանական ստորակարգ ցանկալիքներն արդէն ալնքան ճնշած են լինում գիտակցութեան հօրիզօնում, որ անհնարին կամ գոնէ շատ դժւար կը լինի նորան այլ ևս երևան գալու և մտապատկերներին ու կամքին ուղղութիւն տալու։ Ակսպիտով և բնական գիտութիւնների կանոնաւոր ուսուցումը հետզհետէ կենդրոնացնում է աշակերտի մտապատկերները, հակումները, ձգտումները և սրանցից առաջացած զգացմունքները բարձր գաղափարների շուրջը։ Այս բարձր գաղափարները կամ իղէմները զառնում են կենդրոնական կաւարաններ, որոնցից կամքը հրահանգներ է ստանում։

Եթէ բնական գիտելիքները՝ նոյն իսկ հայրենագիտութիւնից սկսած՝

կանոնաւոր միջոցով են աւանդուում, հէնց մանկական տարիներէն մարդս ընտելանում է բնութիւնը բնախողով աչքով տեսնելու և սորա սուր մտքով ըմբռնելու: Եւ հան ընտելանելը նորան երևում է ոչ թէ իբրև խառնիճա-
ղանձ իրերի և երևութիւնների հրապարակ, այլ միմեանց հետ առնչական
գոյութիւն շարունակող իրերի հիանալի աշխարհ: Իւր մտածմունքներին
ենթարկելու սովորած գլուխը վերադնելով, օրինակ՝ մի ամենաչնչին
արարած՝ և քննելով նորա կեանքի ծագման պայմանները, զարգացումն,
ապագան և այլն՝ հետամուտ է լինում մտածմունքների մի անվերջ շարա-
ւարութեան, մի անսահման պատճառականութեան, որի սկզբը-
նապատճառը միայն մի բարձրագոյն կենդրոնական էակ կարող էր
լինել, որի իմաստութիւնը նորան անհասանելի է, որին նա անքննելի
Աստուած է կոչում: Մենք ահա ուղղութեամբ խորհրդածելով էլ
եկանք այն եզրակացութեանը, որ նաև բնական գիտութիւններն ընդունակ
են կրօնական-բարոյական զգացմունքների կենդրոն առաջացնելու, կենդ-
րոն, որից մենք մեր ամեն բարի գործերին խրախուս ենք սպասում և
վատութիւններին՝ պատիժ:

4. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԲԱՐՈՑԱԿՐԹԻՉ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ:

Իսկապէս ասած՝ մենք կարող էինք բաւականին դժարութեան մէջ
ընկնել, եթէ մեզ առանց այլ և ալլութեան առաջարկէին աշխարհագ-
րութեան բարդակրթիչ ազդեցութիւնը բացատրել: Սակայն հարկ չը կալ
վճատելու. եթէ մենք ուշի ուշով հետեւենք այս առարկայի մտաւոր շրջա-
նի թելերին, մենք կարող ենք պատահել ալիսիսիներին, որոնք ուղղակի
կամ կողմնակի ճանապարհներով մեր նպատակին կը հասցնէին:

Ի՞նչ է աշխարհագրութիւնը և ի՞նչ նորա բովանդակութիւնը: Այս հարցը
մեր ուշադրութիւնը դարձնում է այն գիտելիքների վերաջ, որոնք կապակից
են աշխարհագրութեանը: Մենք իսկոյն վիշում ենք, որ մեր պատմա-
կան, բնագիտական և մաթեմատիկական գիտութիւնները զեղարւեստա-
կանի հետ իսկոյն օղը կը ցնդէին, եթէ նրանց զրկէինք ոտքի տակի հո-
ղից: Աշխարհագրութիւնը ոչ միայն մատակարարում է այդ գիտե-
լիքներին հիմնական մտապատկերներն, այլ և նա կապակի-
ցում է նրանց միմեանց հետ, ուրեմն նա ամենալաւ կենդրոնացու-
ցիչ գորութիւնն ունի, որ ալեքան կարեւորութիւն ունի ընաւորութեան
կազմակերպութեան համար:

Ինքն ըստ ինքեան աշխարհագրութիւնն այն չէ, ինչ որ հէնց առաջին
օրից փակած դասարաններումն են ուսուցանում, որ մի սրամիտ գերմա-
նական մանկավարժ Papiergeographie (թղթաաշխարհագրութիւն) է ան-
ուանել: Աշխարհագրութիւնը չոր ու ցամաք թւերի ու անունների թղթի
վերաջ ցոյց տալն ու նկարելն չէ, որ միայն տաղտուկ կարող է պատճա-

ուել Նա միայն ալն ժամանակ հրճանք կարող է պատճառել, մարդու մտաւոր հօրիդօնը ընդարձակելով, երբ աշակերտը աշխարհագրական տեղեկութիւնները մի ճանապարհորդի պէս է ընդունում: Որպէս զի մանուկը երկակալութեամբ ճանապարհորդել կարողանալ, նորա ֆանտազիան պէտք է բազմակողմանի փորձնական տեղեկութիւններ ունենալ հարկնի քաղաքի կամ գիւղի ու նրանց շրջակայքի աշխարհագրական երևութիւնների մասին: Երբ մարդու միտքը կը հարստանալ հարկնի աշխարհից ստացած իւրացուցիչ մտապատկերներով ու գաղափարներով, միայն ալն ժամանակ և նորան հնարաւոր կը լինի օտար երկրի մասին նկարագրութեան միջոցով գաղափար կազմել: Ապա թէ ոչ, եթէ օրինակ՝ աշակերտը լեռները նկարներէ կ'աղագրաների (մօզէլներէ) միջոցով է ճանաչում, նա կարող է մօտեցնել օրիորդի պէս՝ լեռ տեսնելիս՝ դարմանալ ու բացականչել. «Мама, мама, натуральные горы! (մայրիկ, մայրիկ, բնական լեռներ): Ապալիս ընթերցողը, որ, ի հարկէ, նաև գաղափար չի ունենալ նորա մասին, թէ որքան ժամանակ և ուժ է գործադրում, օրինակ՝ մի վերստ անցնելու համար, նա ինչ գաղափար պէտք է կազմէ ալս կամ ալն ճանապարհորդութիւնների նկարագրութիւնները կարգալիս:

Ի հարկէ, կը համաձայնէր աշխարհագրութեան դասաւանդ, որ ալս գիտելիքը մարդու ներքին աշխարհը բոլորովին ալ կերպ կը փղափոխէր, եթէ նա բովանդակէր ընտիր քաղաքական, տնտեսական, բնադիտական և մաթեմատիկական տեղեկութիւններ, սրանցով լուսարանէր և սրանց լուսարանէր: Ինչ ասել կ'ուզի, որ մի ալսպիսի հիմնաւոր ու բազմակողմանի աշխարհագրական տեղեկութիւնը և՛ աղբերակի անցնալ պատմական կեանքի հասկանալուն մեղ շատ նպաստամատուց կը լինէր:

5. ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԱՃԴԵՑՈՒԹԻՒՆԸ:

Մաթեմատիկան արդէն ստորին դասարաններից սկսել էր իւր դերը կատարել: Միջին դասարաններում նա արդէն մտապատկերների ամբողջ համակարգութիւններ է զբաղեցնում: Հանրահալը (ալգեբրան), երկրաչափութիւնը, եռանկիւնաչափութիւն իրանց քանակութիւնների և ձևերի հիմնալի հարմօնիւրով աւելի և աւելի են պատանում զմալեցնում: Եթէ մաթեմատիկական ալս ճշմարտութիւնները գտնել են աշակերտների սեպհական ջանքերով (հասկանալի է՝ ուսուցչի օժանդակութեամբ) և նրանք միևնոյն ժամանակ ալս ճշմարտութիւնների միջոցով գիտակից են և զել բնական իրերի և երևութների դարմանալի շարաքերութիւնների, ալն ժամանակ մաթեմատիկալի դասաւանդութիւնը հասել է իւր կրթիչ նպատակին: Մաթեմատիկան, անշուշտ, հասած պէտք է համարել իւր վերոյիշեալ նպատակին, որովհետև ալս միթօղով աւանդելիս՝ նա անպատճառ զարգացրած կը լինէր տօկուն կամք և ընտելեան սքան:

չեւիքներն զիտակցութիւն, որ է և՛ աստուածալին էութեան ճանաչողութիւն, որքան մեր մարդկային միտքը նորան իւր գործերից ճանաչել կարող է:

6. ՄԱՅՐԵՆԻ ՆԻ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ:

Միջին դասարանների մայրենի և օտար լեզուների նիւթը բարոյական տեսակէտից արդէն աւելի լուրջ և կրթիչ չարաբերութիւններ է պարունակում: Մայրենի և օտար լեզուների ձևական և մտաւոր առանձնաչատկութիւնների համեմատութիւններն արդէն հանում են պատանուն հալոնի նեղ շրջանից և երևակայութեամբ այլ երկիրներ տանելով՝ ընդարձակում են նորա մտքի հորիզոնը և նախապատրաստում բնաւորութիւնը, որովհետեւ «հալոնիք և աշխարհ պէտք է նորա վերալ ազդեն»: Պատանին երևակայութեամբ կեանքի հոսանքը մտնելով՝ եթէ կարելի է աչպէս ասել՝ տեսականապէս փորձառութիւններ է անում. նա երևակայութեամբ հանդիպում է զանազան զուգադիպութիւնների, որոնց բարոյական տեսակէտից ընթրողութիւնը կազմակերպում է նորա մէջ մտապատկերների զիւրասահ շարքեր. այս զիւրասահ շարքերն են, որոնք, իրական կեանքում նմանօրինակ դէպքերում մի հարց ծագելիս, կարծես, հեռագրաթելերի նման մի ակնթարթում կարևորը հաղորդում են պատշաճաւոր կենդրոններին: Եթէ մտապատկերների վերոյիշեալ շարքերը սերտ չարաբերութեան մէջ չը լինէին, աչն ժամանակ, մի հարց ծագելիս՝ դեռ շատ ուղղութիւնների պէտք է նա դիմէր, մինչև որ իրան վերջնական վճիռ տուող կենդրոնը գտնէր: Դսկ հոգեբանութիւնը մեզ ուսուցանում է, որ մտապատկերների շարքերը քանի չաճախ վերարտադրւին, աչքան ևս առաւել նրանք կը սերտանան: Ապա ուրեմն, եթէ սաների ստացած գաղափարները մեռած գանձ պէտք է չը մնան, նրանց պէտք է առիթներ տալ՝ զանազան ուղղութիւններով վերարտադրւելու և միշտ կենդանի մնալու: Աչպիսի մտաւոր թարմութիւն հնարաւոր է, ինչպէս իմ ուսուցիչ ընթերցողներից մի մասին չափնի կը լինի, «ձևական աստիճանների» և «կենդրոնացման» մեթոդների գործադրութեամբ:

7. ԳԵՂԱՐԻԵՍՏՅՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿՐԹԻՉ ԱԶԳԵՑՈՒԹԻՒՆԸ:

Գեղարւեստներից նկարչութիւնը, որով պարապելու փափաքը իսկապէս հէնց մանկական կեանքի առաջին տարիներից է դարդանում, պատանեկական հասակում արդէն հրապուրիչ է դառնում: Դիտելով գործելու բուռն գրգիռն էր «նկարիչ-մանկան» ձեռքը շարժողը, իսկ պատա-

ն ի ն արդէն զմալլում է գեղեցկութեամբ, ի հարկէ, ես մտածում եմ այն դասաւանդութեան մասին, որ ոչ թէ մեքենայական արտանկարելով է պարապեցնում, այլ ի սկական ի ինքնուրոյն նկարելով։ Այն ժամանակ կարելի էր տեսնել, որ փոքրիկ աշակերտներ, զրաված հայրենի ճարտարապետութեան նկարչութեամբ՝ դասամիջոցին փոխանակ նախաճաշելու և խաղալու՝ եկեղեցու դուռն են վաղում՝ նկարը շարունակելու և դրանք հակական հասարակ ընտանիքի զաւակներ էին։ Ձմալլեցուցիչ և միանգամայն միթարիչ չէ՝ միթէ ալս երևոյթը։ Միթէ ալսալիսի աշակերտը կարող է ալ ես հակում ունենալ դէպի ստոր ու լպիրշ առարկաներն ու երևոյթները։—Նրանց մէջ արդէն վառւել է աստուածալին հուրը, ցնծում էի ես, որ ալրում է ամեն նեխած ու վարակիչ մտածմունք։

Նրդեցողութիւնն ալ շրջանում ճաշագրական համաշափութիւնների միջոցով մի առանձին դիւթիչ դեր է խաղում։ Նա ոգեւորում է երգչին ու նորա եղանակը իմաստի հետ բազմաթիւ մտաւոր թելեր (մտապատկերների շարքեր) ու կապարաններ (գաղափարներ) է թրթռացնում։ Նթէ մի երգ երգւել է աշակերտի ալսալիսի տրամադրութեան ժամանակ, որ ալդ նորա ոգուն համապատասխան է եղել, ալդ երգի կրկնութիւնը, մինչև անգամ շատ տարիներ լետու, մի ակնթարթում վերարտադրում է բազմաթիւ մտածմունքներ ու զգացմունքներ, գործօրինակ՝ «Նորահրաշ պսակաւոր...» խօսքերը վարդանանց տօնին։

Այս ուսումնարանական նշանաւոր շրջանի գիտելիքների բարոյակըրթիչ տարրերը հետադօտելով՝ մենք վիշեցիք նրանց միայն ականաւորները։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ առանց հոգեբանական ճիշդ մեղօթի մաքսիմներ կամ վարեցողութեան կանոններ կազմելն, եթէ չ'ստեղծանհարին է, գոնէ շատ կցկտուր և թերի կարող էր լինել։ Վերացական գաղափարներ, որոնք ընդունակ լինէին մարդու գործողութիւններին ուղղութիւն տալու, կարող են միայն թանձրացեալից (կենդանի օրինակների համեմատութիւններից) վերացուցման միջոցով հոգու մէջ հետզհետէ կազմակերպւիլ։ Նթէ գաղափարը միշտ թարմ հաղորդակցութեան մէջ է իւր աղբիւրների հետ՝ այն ժամանակ կոչը կամ մեռած Փրադ չէ (որով վարակածներ քիչ չեն պատահում), ալ կենսալի և գիտակից հոգեկան կալան, որ մեղ ոչ թէ կուրօրէն է առաջնորդում, ալ լիակատար գիտակցութեամբ։

Գ. ՇՐՋԱՆ 8—11 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՆԻ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ՍԿՋԲԵԱԻՈՐՈՒԹԵԱՆ։

Գեռահաս մարդն անցնելով մտաւոր կազմակերպութեան հետեւալ ա. մտապատկերների, բ. մտապատկերների համախմբութիւնների,

գ. ընտրողութեան, դ. դիտաւորութեան, և ե. մաքսիմի աստիճանները՝ վերջապէս հասնում է վերջին՝ զ. սկզբունքների աստիճանին: Մինչև հինգերորդ, այսինքն՝ մաքսիմի աստիճանը, նա զեկավարում էր նախ ստորին զգալարանական հաճութեանով, ապա նպատակաւարմարութեան միտումներով, որոնք տողորւած էին կսականութեամբ (էգօիզմով): Իսկ երբ նորանում կազմակերպւում են մաքսիմներ ու սկզբունքներ, ալն ժամանակ բարոյականութիւնն է, որ նորան ուղեցոյց է լինում ¹⁾:

Տարաբաղդարար շատ ազգութիւնների ղեռահաս սերնդի մի ստար մասը զրկւած է լինում ուսումնարանական դաստիարակութիւնից, իսկ արժանացածների էլ մեծամասնութիւնը չքաւոր լինելով՝ հազիւ կարող է մաքսիմի աստիճանին հասնել: Ուրեմն նաև ներկալ դարու քաղաքակրթեալ համարւած ազգութիւնների նոր սերնդի մեծագոյն մասը ղեռ թերու կամ անուսում և ալլալէս անպատրաստ է կեանք մտնում: Հասկանալի է, որ ալլալէս նոր սերունդը նոյն չափով ապարաղդ է, որչափով տղէտ ու անբարոյական է նորան իրական կեանք ընդունող հասարակութիւնը: Այս ուղղութեամբ մտածելով՝ մենք տեսնում ենք, թէ նոյն իսկ «քաղաքակրթւած ազգերին ղեռ ո՛րքան մտաւոր, բարոյական ու տնտեսական ոլժերի կենդրոնացում է հարկաւոր, որալէս զի նրանք մի ժամանակ լիովին արժանի լինէին ալլ խորհրդաւոր կոչմանը:

Թէ ժողովրդական և թէ միջնակարգ ուսումնարանի ընթացաւարտը կեանք մտնելով՝ ղեռ շատ կարօտութիւն ունի բարոյապէս կատարեալործելու: Թէև կան հասարակական կրթիչ հիմնարկութիւններ, սակալն զրանցից ոչ ամենը անպալման նպաստում են ալս ծանրակշիւ գործին:

Նս աւելորդ եմ համարում ալլ ևս խօսել, թէ ինչալէս են կազմակերպւում սկզբունքները դասարանական գիտելիքների միջոցով, որովհետև ևս մաքսիմների մասին արդէն խօսած լինելով՝ մեր խնդրի ալս ընդհանուր տեսութիւնը վերջացած եմ համարում: Սկզբունքները կազմւում են մաքսիմների համախմբութիւններից, սկզբունքը նմանօրինակ մաքսիմների հաւաքական կըրակացութիւնն է:

1) Նս յոյս ունիմ, որ իմ ընթերցողը հոգււ դադալման ալս աստիճանների իմաստը չը պէտք է տաւալել հասկանալ: Այս աստիճանները տւած են՝ մադղկային հասակի տեպիկական երեւոյթներն ի նկատի ունենալով: Ինչալէս որ մարդկանց և ամբողջ ազգութիւններին զանալան տեմպերամենս են վերազրում, չը նայելով որ նոյն իսկ անձնաւորութեան կեանքի մէջ բիւրաւոր երեւոյթներ հակասում են նորա ընդհանուր տեմպերամենտին: Այսալէս՝ մենք տկանատես ենք լինում, որ արդէն մանկական վաղ հասակում 3—4 տարիներում, երեան են դալիս բարոյական դադալմաներ ու սըանցից աւաջացած զգացմունքներ, թէև ամեն դէպքում զրանց բսկութեանը չը պէտք է հաւատալ:

Վերջին 1—2 դասարանները աւելի պարապում են գիտելիքները սխառմաների տակ դնելով, որ միևնույն է թէ՛ ընդհանուր սկզբունքներ մշակելով, ինչէ՛ր դանազան գիտելիքների սկզբունքները միմեանց հետ կապ ունին, նրանք նաև կեանքի մէջ մտալու են առանձնացած Ներքին կենդրոնացումից զուրկ մարդը ողորմելի է, որովհետև նա իւր ամբողջ կեանքում կղկղնի նման տատանւելու է:

Իւրաքանչիւր անգամ, երբ ես մտածում էի թէ՛ մալիս մասին, իմ տեսութեանը, քանի դեռում, անքան ես առաւել պայծառ գոյներով երևան էին դալիս երկու հետաքրքրական տեսարաններ: Ես կը ցանկալի եմ իմ ընթերցողին նրանց ներկայացնել. սակայն, երբ գրիչը ձեռքս եմ առնում, զգում եմ, որ միայն մի ազօտ լուս պէտք է կարողանամ նրանց վերադասել: Ինձ նաև այս րոպէին ներկայանում են երկու պատկերներ, մի-նը դերմանական և միւսը հալկական ուսումնարանից: Առաջինում ես պարապել էի միւս ուսանողների հետ մեր մանկավարժական լիզէալին մօտ ծրագրով, իսկ երկրորդում՝ ես պարապել էի մի կցկաուր ծրագրով: Եւ ահա իմ դերմանացի դասարանի մտաւոր աշխարհն ինձ ներկայանում է, իբրեւ մի գեղեցիկ մշակւած երկիր, բաղմապիսի քաղաքներով, գիւղերով, հիմնարկութիւններով, գործարաններով... Իւրաւոր կենդրոններ չարժւում են, կարծես միմեանցից անկախ, բայց երբ մօտենում ես նրանց, տեսնում եմ, որ բոլորը մի ընդհանուր նպատակի են ծառայում, բոլորը միմեանց հետ սերտ կապերով են կապւած: Նրանց մտքերն ու զգացմունքները շարունակ հաղորդւում են հաղարաւոր հեռադրաթիւերի, հեռախօսների և երկաթուղիների բիւրապատիկ հիւսւածքներով: Նստւած է աղ երկրի կեանքին կամ պատւին վերաբերեալ մի ձայն, մի խնդիր է առաջարկւում նորա լուծմանը, և ահա մի ակնթարթում բոլոր կալարանները աներևակալելի շարժման մէջ մտան: Ամբողջ երկիրն զգացւած է և մի սիրտ ու մի հոգի է դառնած:

Հիմա իմ աչքը դարձնում եմ իմ հալկական դասարանի կողմը, և և ահա նորա մտաւոր կեանքի քաղաքնը քանի դեռում, աւելի ու աւելի պարզւում է ինձ: Ես քննում եմ աղ հոգը՝ նա թարմ ու պարարտ է: Մօտենում եմ նորա գործունէութեան կենդրոններին՝ ի՞նչ եմ տեսնում: Նրանք կամ մարած են կամ հողեւարքի մէջ են: Եթէ ինձ պատահում են քիչ թէ շատ զօրեղ կենդրոններ, տեսնում եմ, որ նրանք հարկան կենդրոնների հետ հաղորդակցութիւնից զուրկ լինելով՝ զուրկ են նաև նրանց օժանդակութիւնից: Հաղորդակցութեան միջոցներ կամ չը կան և կամ թէ չէ՝ կտրաւորւել ու խախտւել են: Ահա մի ձայն հասաւ կենդրոններից մէկին. սա տպաւանաց, զգաց, որ անգոր է բաղմակողմանի վճիռ տալու: Նա շտապում է այս ու այն կողմը հրեշտակներ (մտապատկերների շարքեր) ուղարկել, բայց սրանք կամ ճանապարհ չը գտնելուց վտն են դառնում և կամ մահւան են դատապարտւում (հակառակ մտապատկերներից):

Ո՛ւր մնաց ալդ անձնաւորութեան «մի սիրտ ու մի հոգին»—ես նորան չը գտայ:

Վերջացնելով ներկայ հետադատութիւնը՝ ես ինձ նպատակիս հասած կը համարեմ, եթէ կրթական գործին նւիրած անձնաւորութեանը սորանով աւելի տւած լինէի աւելի խորը մտածելու ուսումնարանական գիտելիք-ների բարուկրթիչ զօրութեան մասին: Եթէ բարուկան կեանքի զարգացման օրէնքներին աւելի ուշադրութիւն դարձնենք և մեր ուսուցիչներին պատրաստութիւն և ժամանակ տանք նրանց հասկանալու և գործադրելու, ալն ժամանակ պէտք է հաստատապէս լուսալ, որ մեր կրթական գործն անհամեմատ աւելի ուրախալի կերպարանք կը ստանալ, քան մինչև ակսոր էր: